



Վիմս սպորտն Յ. ՄՆՏԻԿՆՆԻ — ԳԱՀԻՐԵ

“ՓԻՒՆԻԿ,,Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին,
- 1.—Տոննային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ու սոււր նատիրութիւններ. Հայոց գաղթային հասանքին վրայ շանեկան՝ տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոսանաւոր բանաստեղծութիւններ, հեղին սկութիւն ու քարգմանութիւն:
 - 3.—Գիտական նորութիւններ, կես-ժամօք ժողովրդոց կեանքէն ու բարեքն մանրամասնութիւններ, հռչակաւոր երկրախոյզներու երկերէն բազում:
 - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեան վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
 - 5.—Կիսամտեայ ընդհ. բաղադրական կազմութեան վրայ հոմ ու ամբողջ տեղեկութիւններ:
 - 6.—Արտասանմանի եւ գրութեան ընդ սկզբութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴ.ԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար	Տարեկան	Փր. 10
» »	Վեցամսեայ	» 6
Խառատահամարի համար	Տարեկան	» 13
» »	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	» 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<p>Կառակցական ոգին. — Խ .</p> <p>Լեոնականի մը Յուշատետրը. — ՀԱՅԿ ԼԵՒՈՆ</p> <p>Աչք-կապուկ շիտաղանց. — ԱՊԱՀ</p> <p>Բարոյականութիւն թատրոնի. — ՎՕԼԹԻՈՒ</p> <p>Իրաւան կեանքէն (Եակօ)</p>	<p>Տարօնէն լուրեր. — ՄՈՒՇԵՂ</p> <p>Ազգ. Գրոնիկ</p> <p>Քաղաքական կիսամտեայ. — Պ .</p> <p>Յայտարարութիւն «Համալսարան»ի</p>
--	--

Ձեռագիրները եւ չեն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգեր, Նամակ, յաջում եւ բարեանորոգային պէտք է գրիել առ Տիար Ս. ԲԻԻՐԱՍ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE PHÉNIX
INSTITUTION CENTRALE

LE CAIRE



ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿՈՆ... 10
ՎՅՑԱՄՍԵԱՅ 6

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ՎՍՆԻԿ Ե



ԱՐՏԱՅԱՅԱՆ

ՏԱՐԵԿՈՆ... 13
ՎՅՑԱՄՍԵԱՅ 7

ԿՈՎԿԱՅ
ՏԱՐԵԿՈՆ ԲԱՂ. 5



ՓԻԻՆՏԻԿ

ԿԻՍՍԱՄԱՅԱՅ ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1899

ԹԻԻ 14

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՈԳԻՆ

(Շարունակություն եւ վերջ)



ստորագրութիւնները գիւրսու հաւաքուեցան, ըսինք, որովհետեւ ժողովուրդը կը նկատէր այդ հանրագրութիւնն իրրե իր կամքի արտայայտութիւնն և իր վերատրուած ինքնասիրութեան փոքր ինչ հատուցումի միջոց մը: Հարկ է սակայն նշանակել հոս թէ՛ ստորագրողներէն ոմանք — նաև այս տողերը գրողը — ստորագրեցին պայմանաւ որ յետոյ Միքիսի մը գումարուէր, ուր, խնդիրը ծածուկէ և լաւ մը լուսաբանուելէ ետք, պատգամատրութիւն մը գրկուէր, ահաւր՛ Ս. Վարչութեան, ժողովրդին արգար պահանջումներն լստ օրինի և խաղաղասիրտաւ ՚ի գործ գրուելու նպատակաւ: Ժողովուրդը գիտէր արդէն թէ՛ Քաղ. Ժողովի անդամներուն հաւանութիւնը կանխաւ առնուած էր, հանրագրութեամբ մը զիմելու եղանակաւ «չը յիշուի» ի խնդիրը կարգադրուելու մասին: Արդ, ստորագրութիւնները 350ի

բարձրացած էին, երբ հանրագրութեան նախաձեռնարկողները, կամ աւելի բուն բառով, գործակները, ա՛լ իրենք իրենց գլխուն գործելու մէթօք նախընտրեցին. փոխանակ միթիւնի մը գումարումը փութացնելու — ինչ որ բանաւոր էր և օրինաւոր — ծայրայեղ եռանդէ մղուած, պատգամատրութիւն մը կը փորձէն կարգել իրենց մէջէն: Անդին, Հնչակեան կուսակցութեան ըսինք թէ ուրիշ խըմբակի մը կողմէն կասկածները դէպ ի Դաշնակցականը՝ համեմատութիւններ կ'ստանան, այնպէս որ նախապէս ծրագրուած պատգամատրութիւնն — որուն առաջին անդամը, բնականաբար Դաշնակցական մը, իր կարողիկոսքիւնն առարկելով չէր ուզած միջամուխ ըլլալ այս զուտ կրօնական խնդրին — դեռ ի սաղմին կ'ըլիժէ, ու առանց ստորագրողներուն տեղեկութեան ու անոնց կամքին բռնաբարումովը, պատգամատրի պաշտօնով Սեպտ. 5, չորեքշաբթի օրը կը ներկայանան Քաղ. Ժողովին 4 ազգայիններ.

Այն օրը, Տիար Կ. պէյ Շէրլու-
ճեան, Գաւ. վարչութեան երեսփ.
ժողովին Ատենադպիրը, կը փութայ
ներկայ գտնուիլ Քաղ. ժողովի նիս-
տին — թերեւ նոյն ժողովի պատ.
անդամներն անել զրուիքնէ մ'աշա-
տելու վեհանձնական դադափարով:—
Հոն, պատգամաւորներէն մին — Խի-
պարտափակութիւն մը — ազգային զե-
րագոյն շահերը պաշտպանողի մը հո-
վերով առաջ կը նետուի. «Տեսա՞ք,
կը մտաւայ, այս հանրագրութիւնն
ստորագրողները, ստորին զասակար-
գէ, անդուսպ պաշտօնը չստանան
ու մենք, հազիւ մինչև այսօր կարող
եղանք զսպել զանոնք... ետլն»: Ու-
րիշ պատգամաւոր մ'ալ հակառակը
կը պնդէ, ստորագրողները որակելով
պարկեշտ աւ չեղոք, և ի զուր կը
ջանայ այդ տխմար ու ցաւագար
խմաստակին յայտնութիւնները հեր-
քելու, թողած Խիստը ապաւորու-
թիւնները մեղմելու, ստորագրեալնե-
րուն և միանգամայն իրենց խոցուած
պատիւը փրկելու: Ժողովականք,
Տիար Թուրքիկի յայտարարութիւնը
պատրուակ բռնելով կ'առաջարկեն
որ պատգամաւորութիւնը առնն մ'ալ
հաճի ստանձնելու այն պաշտօնը չստան-
անքը զսպելու հոգը, մինչև որ Ժո-
ղովը կարենայ քննել խնդիրն ու հան-
րագրութեան պարունակութիւնը:
Ուստի, պատգամաւորութիւնը կո-
րազուրի ու ամօթահար կ'առնէ կը
քալէ. եղելութիւնը կը հազորդուի
որոց որ անկ է, և Քաղ. ժողովին
ատեն մ'ալ համբերելու առաջարկը
կ'ընդունուի: Այսպէս, հանգարու-
թիւնը կը վերահաստատուի տաքցած
գլուխներուն մէջ:

Սակայն, շատ չ'անցնիր, Գաշնակ-
ցական կուսակցութեան բարեժողիկ

անդամները, — Գահիրէիները բնա-
կանաբար — անհամբեր, դատարկա-
բանութեան քաջավարժ, և անգոր-
ծութեան անվարժ, նորէն կը բռնկին.
ազիստոյա պէտք է. կ'սխկը-
տելով ուրեմն նախընթաց օրուան
իշենց յանձնատուութիւնը առնն մ'ալ
համբերելու, արհամարհելով ուղղա-
միա ու չեղոք ստորագրեալներուն
գիտուցութիւնները, կ'շտապեն, Տեղա-
պահին դիմելու, բողոքելով թէ ողո-
քելով, ազերսելով թէ սպառնալով,
կ'առաջարկեն որ նոյն կիրակին զադ-
րեցնել տայ Պատրիարք Օրմանեանի
անուան յիշատակութիւնը...: Հար-
ցուցինք այդ ինքնակոչ գործիչներուն
թէ՛ ի՞նչ հանգամանքով դիմած էին
և թէ ի՞նչպէս կրնային արդարացը-
նել իրենց այդ անճաշ դիմումը,
պատասխանեցին. «Անհատական դի-
մում մ'ըրինք»: Եւ ըսել թէ՛ այս
անհատական դիմումն ընողներէն մէ-
կը՝ կաթօլիկ մ'է, ինչպէս ինք հրա-
պարակաւ կը խոստովանի, կաթօլիկ
մը, որ կ'երթայ լուսաւորչական քա-
հանայի մը, կը ժպրհի բիթը խօթե-
լու արարողութեանց մէջ... և Տեղա-
պահը քաղաքավար կը գտնուի, ըն-
դունելով զիրենք, թէ՛ և մերժելով ի-
րենց առաջարկը:

Նոյն կիրակին, ցոյցի պէս բան
մը կ'ըլլայ, կ'անցնի. յաջորդ կիրա-
կին ցոյց մը կ'ըլլայ, այսինքն բանի
մ'անճարակներու ազոտս բերան-
ներէն պոթկացած հայհուհներ
ու աղայական աղաղակներ...: Նոյն
օրը, եկեղեցւոյ դրսի դուռը կը փա-
կեն ծպտեալ սատիկաններու վրայ,
ամբոխէն մաս մը կ'եղնէ սանդուխը,
կը խուժէ Առաջնորդարանի նախա-
սրահը: «Չ'իշուի» թեր ու դէմ
թուիքներու փոխանակութեան կը

յաջորդէ ժխտը մը, որուն մէջ կը խղզուին ձայները, վարէն ու վերէն քարձրացող. վերջապէս կը ցրուի ժողովուրդը, հիւր մարգապետի մը յորդորներուն վրայ: Պատմականին վերջակէտը դեհլու համար ըսենք թէ՛ այն օրն իրիկունը, Պէյն էլ Սուրէնի հայու մը սրճարանին մէջ յանկարծ տախկաններէ կը ձերբակալուին 20ի չափ հայեր — հրէայ մ'ալ հետերնին — ամենքն ալ այն օրուան կատակերգութեան ոչ—մասնակից, մին ալ դեռ նոր ապաքինելով վերադարձած հիւանդանոցէն, ուր կը դարմանուէր: Ասոնք, ձեռնակապանքի մէջ պրկուած բազուկներով, ոտտիկաններէ նախատուած իրենց ազգին ու կրօնքին մէջ, կը տարուին բանտը... թէև 18 ժամ յետոյ կ'արձակուին: Հոս, կանգ առնենք «չ'իշուի»ի պատմական կոթողին առջև: Մէկ ակնթարթ կը բաւէ չափելու համար վիհը, որ կը բացուի ամբոխին ու վարչութեան միջև, շնորհիւ կուսակցական ոգւոյն, որ թելադրողն եղաւ գրգռիչ ցաւազարներուն ու առաջնորդը՝ միամիտ մտրդոց սայթաքուն քայլերուն:

Խնդիրը հետզհետէ ստացաւ կրնձուտ կերպարան մը, եկեղեցւոյ արարողութեանց սրբութիւնը պղծելու աստիճան ստնձգութիւններն առին քաղեցին, ու, ամբոխ ու վարչութիւն, մին քան զմիւսն թոյլ խեղճութիւններ, երկուքն ալ շեղեցան շիտակ ձամբէն:

Պահիրէի հայութեան մթնոլորտը կ'ազտուան թափառական թանձր ամպեր, որ եթէ հիւսիսակէ մը չը վանուին, կարկառիտան տեղատարափով մը կ'սպառնան լլկելու ինչ որ ազնիւ է և սուրբ. այդ ամպերը տրգէտներուն, յամառներուն, կամաւոր

ու ակամայ կոյրերուն ու խուլերուն, պատած պաշարած են ազգային հորիզոնը, կը խախտեն լոյսը, որ անտարակոյս պիտի մշրկացնէ ամեն գաղանիք ու կեղծիք: Արդ, ի՞նչ ընել պէտք է, եթէ ոչ կ'ըլլան ընել ժողովրդի լուրջ, խորհուրդ, շեղոք մասին տոհմային պագումներուն, և խոհրդակցութիւնն անհրաժեշտ նկատելով՝ փութացնել արդիւելու իրերու այս յախուռն ընթացքը:

Պարտք կը դնենք ուրեմն հանրութեան վրայ, առանց խտրելու բնիկն ու եկը, զերծ կանխակալ կարծիքներէ, քննութեան առարկայ ընել այս խնդիրը, որպէսզի իրարու յաջորդող ծաղրելի ու հակասական տեսարաններուն վերջ մը դրուի, մի անգամ ընդ միշտ: Ու այս պարտքը կը դնենք միայն հասարակութեան վրայ, որովհետև ներքնապէս համոզուած ենք թէ՛ Ազգ. վարչութիւն կոչուած այժմու բաղադրութիւնը կը պարունակէ տարբեր, քնացող կիրքերն արթնցնելու և ըզեզներ բռնկեցնելու միայն ատակ ու նպատաւոր. իսկ կուսակցութիւնը կը նկատենք հոս իբրև ապիկար ու կրքոտ խմբակ մը:

Ժողովուրդը, գիտակից իր կենսական շահերուն, ինք կրնայ ի՛ր իսկ ձեռքով կարգադրել այդ խնդիրը, բաւական է թէ՛ կուսակցական մասը կարենայ որոշել անկողմնակալ ու լուրջ գասէն: Պէ՛տք է կարգադիր յանձնախումբ մ'անուանել, որուն միակ պաշտօնն ըլլայ Միքիկ մը կազմակերպել, նման Լահէյի վեհաժողովին առթիւ գումարուած միթիւնիկն: Հոն, ի ներկայութեան գահիրէքնակ հասարակութեան, պէ՛տք է քուէարկութեամբ ընտրել անյապաղ Հաշարար Ասեան մը, — բաղ-

կացած ուղղամիտ և փորձ անգամ-ներէ— որ պաշտօն ունենայ քննելու ներկայացած թեր ու զէմ՝ թուիր-ները և իր վերջնական որոշումը հա-զորդելու հասարակութեան, հետեւալ հարցերուն վրայ.

1. Պատրիարք Օրմանեանի հետ-զրին պատճէնն ի՞նչ է. ի՞նչ պարա-գայի տակ քաշուած է. ի՞նչ հետեւանք ունեցած է:

2. Պատրիարքն անպարտ է թէ մեղապարտ:

3. Եթէ յանցաւոր է, պէտք է չ'յիշել անունը, թէ այլապէս վերա-բերուիլ:

4. Պահիրէի Ազգ. վարչութիւնն ի՞նչ պարտէր ընել ու չըբաւ. յան-ցաւօր է թէ ո՛չ:

5. Հասարակութիւնն այսուհետև ի՞նչ ուղի պէտք է բռնէ իր փափա-զին ու նպատակին հասնելու համար:

Եթէ հայ հասարակութիւնն իրօք ներշնչուած է ազգային նաւերական զգացումներէ, եթէ համամիտ չէ՝ որ Ս. Եկեղեցւոյ մէջ կրկնուին զէպ-քեր, ոչ նուազ արատաբեր ազգային ու կրօնային վեհութեան. եթէ, վեր-ջապէս, կուսակցական ոգին կ'ատէ նա ու համերաշխ գործունէութեան մը բարիքները վայելել կը փափագի, պարտի պատասխանել այն կոչին, որ զուտ ժողովրդական է, և, հետե-ւաբար իր բազմադիմի օգուտներն ունի:

Խ:

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

«ՏԷՐ ԱՄԵՆԱԿԱՆ»

Եկեղեցին քարոզ խօսելով, հայրս ծանուցած էր թէ՛ Մեծ-Պահոց օրե-

րը պարտէին բոլոր հաւատացեալները ներկայ գտնուիլ «Տէր Ամենակալ»ի ժամանակ, որ զօրաւոր աղօթք մ'է կ'ըսէր: Յերեկը, կէս օրէն երկու ժամ առաջ, կոչն սկիին զօրանջը հրաւիրած էր թաղեցիները, ևս ալ մօշտ հետ գացած դուռը կը կենայի. ետիս նա-յեցոյ, տեսայ ամբոխը, որ կը ծնրագրէր ու կ'աղօթէր ևս ա՛յդ ով. իսկ ես անձկուս կ'ապասէի լսելու «Տէր Ամենակալ»ը: Գրքակա ինտա՛ջն երկու քահանայակա մտ փոխմի փոխ արտասանել զայն, մինչդեռ մենք ծնրայիր նստած էինք:

Արիչ օր մը, նոյն ամբոխը ներկայ էր, եկաւ «Տէր Ամենակալ»ի պահը = Ահա՛ գառին դռնէն ներս նետուե-ցաւ զլուխը բաց, մտքերը սովորած, պատռած քշանցբալ, յեխտա սո-քերով երիտասարդ մը, զգալը մէկ ձեռքը, միւս ձեռքն ալ բարձրա՛սի պէս շարժելով, վաղեց կեցաւ գրքակային առջև «Տէր Ամենակալ» և այլն և այլն ծամ) մեղով. միշտ գէպ մը որ բարե-պաշտ ամբոխին ինքնամիտիւմը խան-դարեց. հծծիւն մ'ընկաւ ամենուն մի-ջև. աւագ-քահանան շտապեց, բռնել փորձեց այդ արտատոց փոխասայը, որ յաջողեցաւ պրծիլ զինք հալածող-ներուն ձեռքէն, ելաւ խորանն և ան-կէ շարունակեց բերանացի սերտած աղօթքին մնացորդը. ի վերջոյ, ձեռք ընկաւ, թէև ո՛չ նուազ դժուարու-թեամբ՝ այն ստահակ հիւրը, Մեծ-Պահոց ինքնակոչ սիրացուն, որ «Տէր Ամենակալ»ի սիրոյն, եկած էր այն օրը բուսական հեռաւոր թաղէ մը. Ձէյթունի 4 թաշերուն չարս ծագիկ-ներէն գեղեցկագոյնն էր Շիշիկոնց Թխրխս(*) թաղին աննման ձայնա-ւորը:

(*) Թուականէս 29 ստի առաջ Ձէյրունի մէջ ժամերգութիւնը խանգարող այս խեղճ, երբ այսօր գերեզմանէն ելնելով Գահիրէ գաւ, ապօսւծ չ'պի՛տի մնաւ, երբ տեսնեք քի քառորդ դարու մէջ իր արուեստը կ'աւսեւ լազորձող սիրացու - յեղափոխականներն, դասին ետեւէն «Գոհութիւն եւ փոռաբանու-րիւն» պոռալով կ'ապացու ցաննէն իրենց գո-յութիւնը . . . : Ծ. Խ.

Թորոս, որուն բարի ստիշատիսն էր օրն երկու անգամ, առտուն կանախ և իրիկունն ոչ առնե, երևել ասնեայ վրայ, երեսը դարձուցած դէպ ի Դիմոյի ճամբան, ապտամբութեան հրախել լուսակամները, կերևի թէ՛ առզուակ սկսած էր զգալ այգային կամ ցայգային բանաստօթեանց միօրինակութենէն, ու իր արտևասին շորհն ու շարք փայլեցնել ոխտած էր նոյն խկ եկեղեցիներուն մէջ, իր ապամոզը գնել ի տես բուրդ գիւղացիներուն, մին քան զմիան հիացոցիչ անակնկալներով համեմատած ։

Ասկայն այդ օրուան միջազէպն ալ չկրկնուեցաւ Թորոս ալ չէր տեսնուեր, չէր այցելեր մեր եկեղեցին ։ Անի կրկեսը փոխած էր լիկ, իր շահատակութիւնները կը շարունակէր թէ՛ն ։

Օր մը, որահը նստած էինք, ամուգութեն մէկն ելաւ եկաւ նստաւ հօրս քով, մայրս, քյրերս ու հայրը ներս փախան — Թիւրիւնն է Թիւրիւնը, պառալով ։ Մեզմիկ խօսակցութիւն մը սկսաւ ստոր ու հօրս միջև ։ Թորոս կ'աշխատէր ինքզինք պարկեշտ ծախելու ։ Նայաւաճքը միշտ բոլորտիքը դարձրնելով, գաղանիք մը խօստարանիկ ազգի մը ձեն ունէր, ի վերջոյ բացաւ սիրար ։ Նախ ներսով խնդրեց անցեալ օրուան անխորթ միջազէպին համար ։ յետոյ, վարանտ ու երերուն խնդրեց որ իրեն թոյլ աչախ վաղուան ճաշի ժաման «Տէր Ամենակալ»ն արտասանելու, յարելով թէ՛ այս շորհը չղայաւելու համար ինք պատրաստ էր կրելու ամեն զոհողութիւն ։ Հայրս, հակառակ ջերմեանդութեան ինչճ տիրացոյին, առարկեց թէ՛ քահանաք միայն ունին իրաւունք այդ աղօթքի արտասանելու եկեղեցոյ մէջ հրապարակաւ ։ Ասոր վրայ «Շտա լաւ, ըսաւ, առանց շարքելու, քանի որ քահանայից մենաշնորհն է այդ փոխը, ի՞նչ կը պակսի ուրեմն ինձի, փիլան մը, հողաթափ մը ու սե գգակ մը, այնպէս չէ՞, ասանց պէս շատ ի՞նչ կայ,

Ս. Յովհաննու եկեղեցին պահէ Աստուած» ։ Այս բառերը մշտնայ ու կարծմրած գէճքով մը դարս ելաւ զնայ ։ Հայրս ժպտելով ըսաւ մերիններուն թէ՛ Թորոս վաղը նորէն խաղ մը պիտի հանէ ։

Վայն եկած էր իրիկունը սեզանէն ետք, մեր գրացիներէն բարի ծերակ մը, Մարտիկեցի Վարդան, եկած նրատած է, մեր սրահը, ամենքս ալ ներկայ էինք ։ Դարձեալ խոսին Թորոսին խօսքը ։ Մերակը, զլանախօզը ձեռքը, պատմել սկսաւ այն օրուան մէկ միջազէպն որ անգի ունեցած էր Ս. Յովհաննու եկեղեցին ։

Ճոշի ժամերգութենէն ստալ, երբ կոշտակը կը հնչեցնեն, տիրացաւ Թորոս կը կանխէ, քահանաներէն առաջ կերթայ Ս. Յովհաննու եկեղեցին կը մըտնէ գաղը, վրան կ'աւնու քահանայի մը փիլանը, ստքը կը քաշէ զոյգ մը հողաթափ ու կ'երթայ կը թաղչի ։ Քիչ վերջ քահանայը կը համոն, ամբարը կ'եւայ տակաւ, եկեղեցին կը լեցուի հաւատացեալներով ։ Թորոս գաղը թողեր ասանդատունն է մտեր, ոչ սքտեսած է զանի, միայն փիլանակարոյս քահանայ մը, և հողաթափէ զուրկ ուրիշ քահանայ մը, առգնապով կը խոզարկեն դասին բոլոր խոշորը, կը փրատան իրենց փիլանն ու հողաթափը, զուր ջանք ։ «Տէր Ամենակալի ժամանակն է ։ Անակնկալ յարձակում ։ Ասանդատուն սեկքը, փիլանը կ'աւակն ու հողաթափը ստքը, սե գգակիկ մ'ալ գլխար, կ'երևի Թորոս ժպտուն ու գոտոզ, կը վաղէ ոզիզ գէպ ի դրքակալը, ինք մինակ կ'սկսի ու կը շարունակէ բարձրաձայն քաղել ամբողջ աղօթքը ։ Ժամերգութիւնը կ'ընդհատի Թորոս անդապի ի է, պաղ արինով ու խոճի հանգարտութեամբ կ'աւարտէ «Տէր Ամենակալ»ը, չատալով իսկ կարեորութիւն իր շորքը խոնած տիրոխին ազերմներուն և ծաղրելով անոնց սպառնալիքը ։ Ամենուն գէժ մէկ պատասխան միայն ունի ։ «Ահա՛ փիլան, ահա՛ սե գգակ

ու հազարթափ իրաւունքն աւանց է, ասանդ Ոչ ոք բան մ'ըմբռնած էր Թորոսի այս նոր ինքնապաշտպանութեան ոճէն : Դրացի ծերուկին պատմածին վրայ, կարելի չէր բռնել ծիծաղը բոլոր ունկնդիրներուն :

Ազուհայի օրերը, ամեն տարի, մանաւանդ ճաշի ժամերգութեան մէջ, եկեղեցիներէն մ'ն պիտի հանդիսափայր ըլլար մեր լեռնայի փոխասացին նորագիւտ մէկ շահատակութեան :

29 Սեպտ. 93 ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ

ԱՉԲԿԱՊՈՒԿ ՉԽԱՂԱՆԲ

Գտակ մ'անճարակներ, որոնց բարոյական սնանկութիւնը հանրային կարծիքին, կամ՝ որ նոյն է, վճարելի ատենին վճիռը հազամ է, ելեր ժամանակէ մ'ի վեր Գահիրէի հայ գաղութին առաջնորդութիւնն ստանձնած են. ժողովուրդ և երիտասարդութիւն, ահա՛ իրենց ձեռքին զէնքերը, զրս վստահութեան — եթէ երբէք կը վաշելեն — զեզումի տատիճան կը գործածեն իրարու դէմ. տեսակ մը խաղ է այս, եզերակատակերգական, սրուն, դժբաղդաբար, ակամայ հանդիսատես եզամ է Գահիրէքնակ հասարակութիւնը : Ուստի, պարտաւորութիւն կը զգամ առաջին և վերջին անգամն ըլլալով հանրային կարծիքին ենթարկելու հետեւալ իրողութիւնները, որոնք կը լուսաբանեն խողջուած խազին խրթին և մութ կէտերն. ու խաղարարներուն վստահաւոր մեքենայութիւնները :

Մանօթ հանրագրին պատրաստութեն առաջ սկսած էին արդէն ձրգտումներ, ապօրինի և ծաղրելի միջոցներով գաղբիցներէլ տալու համար Օրմանեան Պատրիարքին անուան յիշատակութիւնը Ս. եկեղեցւոյ մէջ : Ես, նախանձախնդիր ժողովրդին շահերուն ու այդ բանի միջոցներու կիրարկութեան արդիւլերու փափագով, կարծիք յայտնեցի ժամանակին թէ՛

տեղոյս հայ գաղութին շահերը կը վստահուէին այդ կերպ յախուան գործողութիւններով. ՚ի վերջոյ, սրտուեցաւ պատրաստել հանրագիր մը, որ պարունակութեամբ լինէր ժողովրդին կամքին ու զգացումներուն յատակարարայտութիւնն, և գիմամեխ՝ խաղաղասիրական և օրինուոր սահմանի մը մէջ. այս այսպէս :

Հանրագրին ստորագրութիւնները բուսական համարուելով՝ հարկ եզաներկայել զայն տեղոյս Քաղ. ժողովին : Պատգամաւոր կարգուելով՝ բստանձնեցի այդ պաշտօնը միակ պայմանով որ կուսակցական դիտումով ա՛լ չչարունակուէին ստնձգութիւններ մութի մէջ :

Արդ, երբ չորս պատգամաւոր, ներկայեցինք հանրա իրը Պատ. Քաղ. ժողովին, մեր մէջէն Պ. Երսուանդ Քէրէսթէճեան (թէ և զինք Յովհաննէսեան կոչել խոհեմութիւն համարեց ժողովին առջև) սրիբունի հովեր առած՝ յայտարարեց. — Այս քանազիրն usurուգրողներ պ սղբրը յայլազ, usurիկն դասակարգիկն կը վերաբերիկն, եւ մեկի (չեմ գիտեր սր՞ք) հազի կըրցակի գապեղ(?) այդ սաք գրախներ. հարկ ակիրաժեշտ է ուրեմն ժաւ առաջ գոհացում սալ մեր պահանջներուն . . . : Միւսներս ջանայինք գարմանել այդ արտաուայ յայտնութիւններու առաջ բերած հակազգեցութիւնը, սակայն ՚ի զուր : ժողովը յենլով մեր գարայերջիկ սրիբունին տօնքիչօթական ճառով՝ ճառին՝ առաջարկեց մեզ գոնէ 15 օր համբերել ու նորէն զայել ակնորկուած անզուպները, որպէսզի ինք, ժողովը, խորհի խորհրդակցի ու պարտապաշտաճը սնօյնէ : Օրն էր չորեքշաբթի : ժողովին պատասխանը հողրրոյ եցինք առ օր անկ էր : Եւ ահա՛ 3 օր վերջ, սրբաթ իրիկուն, երկու գաշնակցական պարտնայք (հեղինակութեամբ մե նաշնորհով) կ'ելնեն մութին կ'երթան Տ. Մամբէի քով, սպասնալով կը պնդեն որ այն կիրակի "չ'յիշուի" Օ :

մանեանի ամուսնը : Տ. Մամբրէ զիրենք կը ճամբէ յորդորելով հայրադար ի զգաստութիւն : Եւ այսօր կ'ուզեն հաստատանք միամիտ ամբօխին թէ՛ անհատական պերսուտորի պարզ զիմու մ'ըրած են եզե՛ր . . . :

Է՛հ, թո՛ղ այնպէս լինի, բայց ի՞նչ լսենք յաջորդ կիրակիի ամօթայի գէպփին ո՛ր անգի կ'ունենայ Ս. եկեղեցւոյ բակին մէջ նոյն իսկ իրենց գրգռմով աւ՛ւր կը մնայ սրտոգամաւորութեան պաշտօնը, զոր ստանձնած էի միակ պայմանով որ խոշորախրակուն և օրիկնաւոր սահմանէն անդին չսլփանայնէր . . . :

Իսկ նախօրդ ամայ ԶԱին առ իսողջութեամբ հրաւիրով ներկայացայ ժողովին, միայն և միայն յայտարարելու համար թէ՛ իմ պաշտօն վերջացած էր ո՛րն օրէն որ խնդիրը կուտակցակուն գոյն առած էր, մինչդեռ հանրագիրը պարտէր լինել ժողովրդին կամքին ու զգայուններուն յոտակ արտայայտութիւնը, անհատական ու կուսակցական շահագրիտութիւններէ զեր ի վերայ :

Կ'ընդունիմ թէ՛ անկիւններու մէջ եղած վայրահաշտութիւնները կարող են աստիճան մը պզտորել բարեմիտ մարդոց զգացումները, վատ դազափայր մը ներշնչել իմ մասին, ուստի ճակատաբայ, ձեռքս խզելու դրած, այդպիսի սինկրօններուն իմ զգումքս ու արհամարհանքս յայտնելէ վերջ՝ կը յայտարարեմ արդոյ և սիրեցեալ մերայնէից թէ՛ իմ usnրագրութիւնս ակնկոծ կը մնայ ծակօր հակերսգրիկն ճակ, թէ և արհամարհանքի այդ զգացումիս արտայայտութեան մէջ այնպիսի շեշտ մը գրած եմ որ իրենք, այդ աչքը—կապուկի խաղաբարները, պատրուակ մ'աւելի կարծած են անհնալ իմ վրայ տարափ մը տեղայնելու անխոստովանելի զրախօսութիւններու, որոց կարգէն է նաև սուտ ու անհիմն տարածայնութիւնը թէ՛ ես ուրիշներուն հանրագիր ստորագրել տալու պաշտօն ալ կատարած եմ :

Պիտի խնդրէի լրջամիտ հասարակութենէն ո՛ր իրենք ևս հետաքրքիր հայեացքով մը թափանցէին խորը այն իրողութեանց, ըմբռնէին այս աննրպատակ կանչաւրուութեան իմաստն ու շարժառիժը, և իրերու կատարեալ գիտակցութեամբ՝ իրենց արհամարհանքին մէջ ծրարէին վարագորին ետին խողացողներն ըն թերադրեալ դարձումս միայն ու նոյն իսկ խողացողները :

Ա՛լ վարագոյրը պատուած է, թո՛ղ աչքը—կապուկ խողացողներն իրենց ամօթայի մերկութեամբ բեմին վրայ գեռ քայլ փոխեն :

Ա.ՊԱՀ

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹԱՏՐՈՆԻ

Ի՞նչ է ճշմարիտ կատակերգութիւնը : Լաւն ու պատշաճը արարներով ու սրամախօսութիւններով ուսուցանելու արուեստն է : Բարդատարար սրջափ պաղ է մենախօսութեան պերճախօսութիւնը : Երեսուն քառասուն հազար խրատական ճառերուն մէջ սոսկ ասացուածք մը միտք պահուած է երբէք :

Մինչդեռ լաւ ողբերգութիւններն ու կատակերգութիւններն ամուլ հիացում մը չեն արտադրած. ուզած են յաճախ մարդիկը : « Օգոստոսի Գութին » մէկ ներկայացումէն վերջ տեսայ իշխան մը որ իրեն գէմ եղած նախատի՛քի մը ներքեց. իշխանուհի մը որ իր մայրն անգոսնած էր, գնաց անոր ոտքերուն փարէլ, երբ դուրս ելաւ թատերասրահէն, ուր Ռոտուֆ ներում կը խնդրէ իր մօրմէն. ծանօթ մարդ մը հաշտուեցաւ իր կնոջ հետ Յէյագէ á la modeի (նախապաշարում նորաձեւութեան) խաղէն վերջ. տեսայ աշխարհի ամենավէս մարդը որ համեստուկ մ'եղաւ Յեռիւստի (Փառս-

մել) կատակերգութենէն վերջը. թե-
րևս կրնամ թուել ընտանիքի առա-
նեակ զաւակներ զոր *Enfant protiguel*
(Մնառակ սրգի) կատակերգութիւնն
ուզգամ է: Եթէ ելմտագէտները ա՛լ
կոպիտ չեն, եթէ պալատականք ա՛լ
ունայնամիտ բնակալիկներ չեն, եթէ
բժիշկները ա՛լ վազ անցած են իրենց
ալա յողիկ պատմութեանէն, գրակէն
ու խորհրդակցութիւններէն. եթէ քա-
նի մ'իմաստակներ մարդ եղած են,
սրբւ են պարտական, թատրոնին,
թատրոնին միայն:

Որչաի ոչորմելի են անոնք որ
զրագիտութեան այս առաջին սրբան-
տին գէտ կը խօսին, և կ'երեակայեն
թէ աղբի թատրոնը պէսք է գատել
մեր ազիտութեան դարձում խեղկա-
թատրերով և սրտք կը շփոթեն Սո-
փոկները, Մէնագրները, Վարիս-
ները և Տէրէնցները՝ Տապարէններու
և փոխիչներու հետ:

Բայց, ա՛լ աւելի խղճալի են անոնք
որ կ'ընդունին փոխիչները և Տա-
պարէնները, իսկ կ'արհամարհեն Պո-
լիկոսները, Գոթոլիանները, Զայի-
րաններն ու Ալլիբրաները: Ահա՛ մարդ-
կային միտքն ա՛յս հակասութիւննե-
րուն մէջ կ'իյնայ ամեն օր:

Ներքէնք խաւրուն որ երաժշտու-
թեան գէտ կը խօսին, կոյրեղան որ
կ'ատեն գեղեցիկը: Անոնք, տարա-
բաղներ աւելի, որոնց զբացած է
բնութիւնը իրենց զգայարանքը, բուն
թէ ընկերութեան թշնամիներ, որ
ուխտած ըլլան անոր սխիտանքն ու
հրապոյրը ջնջելու:

Թագմ. Վ. Ա. Հէ. ՎՍԻՔԻՅԻ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

(Ե Ա. 40)

Մայի՛ Սրբազանին վերջին շնչանքն աչ-
գըւած, մշտանդի խանութարանն ալ զին-

ուած, սկսաւ տակաւ զգալ վտանգը, որ
կրնար պալթիլ, լեռնական կարիճները պա-
հանջելու իր պնդումն, ուստի խորհեցաւ
ուրիշ գործնական միջոց մը գտնելու, որ
ծառայէր պակեղու իր իղձը, այն է նոր
աստիճանի ու փառ ի բարձրանալ, Սուլթա-
նին բարձր հաճութեան արձանաւալ. ան-
զուսղ ու յարախող Զէյթունի բարեկար-
գելը կոչուիլ. ի՛նչ լսոցոցէջ տիտլոս. և
սակայն, իրականին մէջ, հաւանականու-
թեան նշոյլ մ'իսկ չէր նշմարուեր, որմէ
կարենար ինք առաջնորդուիլ: Ի՛նչ կրնար
ըլլալ այդ գործնական միջոցը: Չէր կարելի
պատա՛ստմ մ'ստեղծել կղերին ու աշխար-
հականին միշև, և եթէ կարելի էր, ի՛նչ
օգուտ պիտի կրնար բաղել ինք այդ պա-
ռակտոմէն: Կարելիութեան վրայ կատաճ
չունէր, բանի որ իր ձեռքին մէջ ունէր,
կամ ունենալ կը կարձեր Միջին-Յաղի Ս.
Աստուածամայ քարց-մօրուր բահանան,
խորամանկը, կեղծուարն ու անըմբռնելին:
Ան՛, հլօրագունիս փողարը կ'ըլլար յաճախ.
այս էր իր նշանաբանը. հայրենիքի սէրը կը
խօսէր անոր սրտին ա՛յն ատեն միայն որ
կառավարութեան տկարութիւնը կը շեշտուէր.
ուրիշ սարագուններու մէջ սիպար-գաւաճան
մը կ'ըլլար...:

Մայի՛ լաւ սերտած էր զանի, թէ՛ ան-
հասի և թէ՛ հանրային կեանքին կողմն-
րովը. Սրբազանի բմբոսա վարմանքն ու
հակապետական զիրքը պիտի մատնանիչ
ընէր նախ, յետոյ անոր անկուսն ու նոյն
խո՛ ձեռքակալունն ու արքայութիւնն
գծելով բահանային յոյսեր պիտի ներշնչ-
չէր սիրանալու սիրազուրկ մենաստանին,
ըստ բնաց տրամադրելու անոր բոլոր եկա-
մուտները, տեղային կառավարութեան ու-
ժովը ճա՛տասագրին հետը խաղալու լեռնա-
կանաց, կայն կայն: Այս ամեն հեռա-
միտներու փորձիչ փողիտգուններուն մէջը
պիտի ջանար ընկղմելու իր թագուն խոր-
հարգներուն իրաբարութեանը ծառայելու
ուհամուտած մշակ ատակ մարդը, իր խար-
գուանքներուն գործիքը, Տէր Կարապետ
Երկայնեանը...: Մակայն, մէկ բանէ կը
կատկածէր ու կը վստիմար. Սրբազանին ժա-
ղովրդակա՛նութիւնը փուշ մ'էր, իր աչքը
կը ցցուէր. ինք լաւ գիտէր թէ՛ ամբոսին,

խուժանին, մանաւանդ լեւնականներու կամբը՝ ոյժ մ'ըր անպարտելի, որուն դէմ պիտի փշռուէին ամեն կառավարական հնարք ու սպանալիք: Սրբազանը սիրելի էր ժողովրդին, զոր ընկճել, նուաճել պիտի փորձէր ինք, համաձայն ծրագրին զոր խմբագրեցին Արթիք ու ինք, Մարաշի Բառասուն-Ակունքը տրուած հացիերոյ թէն ետք. ո՛չ սք լսած էր անոնց փոփոռքը. մշտահոս ջրերու կարկաջին և ուռիներու սաղարթներուն մէջէն հեծեծող հովին հետ խառնուած էր այն գիշերային գազտնիքը: Ինչ ընել, կլերին կողմէն գերին էր յարուցանել գեղեցութեան և թերևս հետուութեան հոսանք մը Սրբազանին հեղինակութեանը դէմ. սակայն, եթէ ամբողջ զանի պաշտելէ չ'հրաժարէր, եթէ լեւնական աւազակները չ'յանձնելու յամառութեանը վրայ, բազմապատիւ էր անոր վայելած համակրանքը, եթէ նոյն իսկ աւազակները ստանձնէին զանի պահելու, պաշտպանելու և անյարձակելի կացուցանելու հոգը:

Հետեւեալ, յիմարութիւն էր անոր դէմ գաւ նիւթելու խորհուրդը կամ փորձը, բայց, բան մ'ընել պետք էր, գոնէ իր զիրքը փրկելու համար. ոչպանալիքով սկսաւ, ինչպէս պիտի վերջացներ աղերսելով. պատուաստին զոհերը, ձերքակալուած բիշլը, Վէթանուրին, Երիտասարդը. ասոնք կենդանի վիաներ էին իր գործունէութեան, ազդեցութեան, իշխանութեան. ասոնք արդէն կրնային յանձնարարել անոր հաւատարմութիւնն ու վարչական կարողութիւնը. երկու յատկութիւններ, որ կը պահանջուէին մանաւանդ այն թուականներուն՝ ամեն կառավարական պաշտօնեայէ. բայց եթէ աւազակները չը յանձնուէին, այդ ձերբակալութիւնը պիտի չ'ոտնենային ակնկալուած արդիւնքը. ուստի, դարձեալ միտքը սեւեռած մնաց ծրագրին նոյն յօդուածին վրայ. այո՛, անհրաժեշտ էր աւազակներուն եթէ ո՛չ յանձնումը, գոնէ հնազանդութիւն յայտարարող դիմումը. ասի շատ դժուար չ'էր. քարց-երկը կրնար ի գլուխ հանել այդ գործը:

Այդ պահուն, գաղափար մը նետի պէս կտրեց անցաւ այն զառամած ըզըզէն. թուոց պաշտօնատունը, միջնաբերդին ճամբան բռնեց. խորհեցաւ իրիկուն ընթրիքն ընել բերլին իշխան Բասիլուսեան կարապետ Ալայի ապարանքին մէջ, ուր անտարակոյս պիտի գտնէր իր փնտասած երկըր: Սահայն ճամբան միտքը փոխեց, խորհելով թէ՛ հաւանական էր հոն հանդիպել Սրբազանին, որոն ներկայութեան պիտի նեղուէր ինք: Ուստի, ձին պարձուց գէպ 'ի զօրանոցի ճամբան ու բշարն ի վեր երթալով՝ իրիկուն մշուշներուն մէջ կորուսեցաւ:

Ամառ էր, Օգոստոսի կեսն անցած էր, այգեկութիւնը օրերը կը մօտենային, լեւնականները բոլոր կը պատրաստուէին այգիները չուելու: Ձէյթունի հարաւակողմը, Շուղբի հարաւ եզերքին վրայ կը սարածուի Ա.Նի Չուրը, ծառագարդ այգեստաններէ, շրջապատուած ու տաշուտ դարևանդներէ կտրուած: Այդ ձորը ձմեռն հեղեղատ մը, իսկ ամառն առուակ մը կը կազմէ, երկաբեղով գէպ ի վեր, արևելակողմը, երկու եզերքը սփռուած կանաչագեղ այգիներովն ու պարտէզներովը:

Այդ այգիներու շարքին մէջ, քանի մը բշարներու ետին, գարատափ մը կայ որ Տալիսին Չուրը կը կոչուի. հոն, փիճիներու և թմբիներու անտառակի մը խորը, անմարգաձայն խորշիկ մը, քանի մը լեւնցիներ քաշուած, շրջանակ մը կազմած էին. 16 կարիճներ, որոնց խօսակցութիւնը կը դառնար այն օրուան փրայ: Աստիք էին Սայիճի պահանջած աւազակները, որոնք հոն առանձնացած՝ անհամբեր պ'ուպակին վերագարձը պատգամաւորին, զոր դրկած էին վանքը, Սրբազանէն ստոյգ լուր մը բերելու համար: Իրիկունը կը մօտէր:

Արևը Սօլապ-Տէակի հարաւային լեւնաշղթաներէն կարծես թէ չէր ուշեր գաւառիլ, դեղին-կարմիր հրեզէն ոլլիանոսի մը մէջ ընկղմելով արևմուտքի ստուերախիտ անտառները, որոնց հեռուէն կը նշմարուէին կատարները վերջալոյսի ծիրանեզոյն ալիքներուն մէջ թաղուած, և գիշերի վերահատ ներկայութիւնն ազդարարող զովիկ սպիտէ մը օրորուած...:

Դարևանդին գազաթին վրայ մութ կէտ մ'երկցաւ, ամենուն աչքերն յտոեցան անոր. քանի մը բոպէ վերջ, գեղացի մը քրտնաթոր

եկաւ բարեկեց խումբն ու նստաւ գետինը. պատգամաւորն էր, Սրբազանէն բարի լուրեր բերած էր: Ուստի անհոգ ու ապահով, ամեն մէկն իր գործին գլուխն անցաւ, ընթրիքի սրտաբաստութիւնն ընելու համար: Արդէն սնկին պաշար մ'որսի, զոր այն օրն ըրած էին անտառներէն. լեռան կարաւ, Լորամարգ, շուղրի համեղ ու գլր ձուկերէն, մոտակայ վրաններէն ալ թանձր մածուէն ու կարագ. ահա՛ գեղջուկ պարզ հացիկ, Բոյթը: Կերան, կշտացան, սպառագէն կազմ ու պատրաստ ճամբայ ընկան զեպի վանքը: Այդ կտրիճները ցերեկը կը քնանային ու զիշերը կը հսկէին:

Իսկ Սաշի հօրանոց հասնելուն, անմիջապէս սուրհանդակ մը կը հանէ ի Մարաշ, տարով անոր ծրար մը, գաւառի գատաւորին ուղղեալ, որուն մէջ կար ներփակեալ հետեւեալ հեռագիրը, որ անցապաղ քաշուէր պիտի.

Հաշեպի կուսակալոր թիւսմ.

Ձեյթունի ջուղեր շանձնեղ առագակները, կղեր ու աշխարհական առ հաւարակ կ'ընդդիմանան իմ հրամաններուն. վարկեանէ վարկեան կը սպասեւ Ձեր շարժը հրամանը.

Սաշի

Արեֆ զեռ նոր ելած էր իրիկօան ընթրիքէն ու սորձը կը խմը, հրը, նահանգին հեռագրական Տնօրէնը՝ խոյով երեսով ներս մտաւ, գետին խոնարհելով մօտեցաւ, տուաւ իրեն կարմիր նամակ մը, զոր շտապով բացաւ Արեֆ. Մարաշէն քաշուած հեռագիրն էր:

— Անճարա՛կ մարդ, մրմնաց ձեռքը ճակտին զարնելով, ու իր նահանգին ստորադասեալ մէկ սրաշտօնէին ներկայութիւնը վայրկեան մը մոռնալով:

— «Ձեն յանձներ, չեն յանձներ, ի՞նչ հարկ այդքան սնդեղու»: Ու սկսաւ լայնաբայ չափել իր սենեկին լայնքն ու երկայնքը, զեղին—ձերմակ մօրուքը չարչարելով:

Տնօրէնը զեռ կ'սպասէր հոն, վերջապէս Արեֆ ճամբեց զանի ու պատուիրեց որ կէս գիշերէն առաջ հանդիպի ապարանքը: Ու Տնօրէնը մեկնեցաւ: Սեղանին առջև նստաւ, հնչակը հնչեցուց, թիկնապազ մը ներս մտաւ, բարեկ կեցաւ, մէկ երկու վայր-

կեանէն մեկնեցաւ իր տիրոջ պատուէրներով: Կէս ժամ յետոյ նահանգապետին սենեակը մտաւ Եակօ, իր միակ հաւատարիմ ու փորձ խորհրդականը:

Կէս գիշերն անցած էր ու զեռ Եակօ չէր աւարտած իր խոստովանանքը: Աըշալուսին միւսեղգիւր կը ձայնէր միւսարեւէն, երբ Եակօ թողուց Արեֆի սենեակն ու գնաց իր տունը, հանգչեցնելու համար իր աշկիւծ գլուխը: Հեռագրատան տնօրէնը հանդիպած էր ապարանքը, պատուիրուած ժաման, ու Սաշիի հեռագրէն քաշուած էր արդէն հետեւեալ պատասխանը.

Ձեյթունի, Սաշիի քաշալիս.

Մի՛ պնդե՛ր. քաղցրութեամբ համոզե՛, անուանական անագակնոր թիւսմ մը թո՛ղ ցուցրնեն, կայսերական և հրումը հաղորդե՛ տագակներուն, սրտգեւեկե՛ր աշ քաշիս՝ իրեկց ու մանուակի իրեկց պե՛սիս. վաղը վերջացուր այդ խնդիրը, եւ հեռագրե՛ ետքը, կ'սպասե՛ս.

Արի՛ճ

Եզեկիստան ու քարք—մօրուքը, Բասիլոսեանին ապարանքն էին այն իրիկունը. կարապետ աղա Սաշիի բռնած ընթացքը լաւ չէր գտներ, բայց, միևնոյն ժամանակ չէր ալ ուզեր որ եզեկիստան այնքան ընդդիմութիւն ցոյց առած ըլլար քանի որ ժամանակը շատ փափուկ էր. կը խորհէր: Այն պահուն, վանքին զննապանը սանդուխտ ելաւ ու մօտենալով Սրբազանին ականջն ի վար փափաց: Քիչ մը վաըը կեցի՛ր գուն, բաւ զննապանին ու պատրաստեցաւ մեկնելու:

Դարձաւ նորէն խօսակիցներուն ու մրտմրտօքով մ'ըսաւ. «Վանքն եկեր զիս փընուեր են, հիմայ ի՞նչ երթամ ըսեմ տղոց: (Շարունակելի)»

ՏԱՐՈՆԷՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՇ 8 Մեյս. 1899

Մայիս 24ի և Յունիս 26ի նամակներովս նկարագրուած գեղքերը ժամանակին իմացուած են արդէն. այժմ մանրամասնութեանց կը դիմենք անգամ մ'եւ մասնակցելու այս

երբև ինի զուարթ այեմ տխուր դաշտի բնակչաց սրտածմլիկ ձայնին:

Աստանդական յեղափոխականներ թուով 8, Յրօնք գիւղը կը հասնին և կառավարութեան կասկած չը յարուցանելու համար մարագի մէջ կը պահուին. գիւղապետներէն Ղուկէ-Սլօն և Դիւա-Դալն կ'իմանան ու Մշոյ կառավարութեան լուր կուտան. արդէն քիչ մ'առաջ Պիթլիսի կառավարութեան մի հեռագիրը Մշոյ կառավարութեան աչալըջութիւնը կը հրուիրէր յեղափոխականների հետքը գտնելու համար: Մատնիչների լուրը կը հաղորդուի հեռագրաւ Պիթլիսի կառավարութեան, որն 1500 զօրք կը զրկէ, ի բաց տանալ քերտ աշխուժները, որոնք կանոնաւոր զօրաց գնդին միանալով կը յարձակին Յրօնք գիւղի վրայ. կը պաշարեն այն մարագ, որուն մէջ կը գտնուէին մեր յեղափոխականներ, որոնք տեսնելով կրակի բոցերու ծաւալը, պատը քանդելով զուրս կը սլանան և անխուսափելի մահը աչքի առջև ունենալով իրենց կեանքը ձրի չը զոհելու համար քաջաբար կը կռուին, թշնամիներէն բաւական հոգի կը կոտորեն, որոնց մէջ կը գտնուէր Դալիպ էֆեն որ հայութեան հրէշը և միանգամայն տեղային կառավարութեան պաշտելին էր, և եկող կառավարիչներն իւր ձեռք խաղալիկ պարձուցած էր. նոյնպէս քիչ մ'առաջուան դաւաճաններից Դիւա-Դուօն իւր հաւատարմութեան վարձքը լիառատ կը ստանայ: Բաւական կոտելուց յետոյ յեղափոխականներն ալ կ'սպաննուին: Դալիպ էֆենտի մարգերը կատողած՝ մի քանի անգամ Մուշի մէջ հայերու վրայ յարձակած են և երեք հայեր սպաննած՝ բայց կառավարութիւնն արգելած է: Մշոյ գաշտի հայերն աճի ու ուրախփի մէջ են:

Յրօնք գիւղը կը բաղկանայ 300 տուներէ, որոնց ամենքն ալ հայաբնակ են. գիւղի ունեցած ամբողջ կահ կարասիներ, ոչխարներ կայն, աւարի տրուելէ վերջ, կանանց և աղջկանց բնաբարութիւնը ալ տեղի կ'ունենան, ու յետոյ մատնիչ Սլօն իւր որդին և ուրիշ մի քանի անձինք ևս ձեռքակալուելով Մշոյ բանաը կը տարուին:

Ճանապարհին վրայ գտնուող ուրիշ հինգ հայ գիւղեր ևս, վերայիշեալ 8 յեղափոխա-

կաններին պատճառաւ ամեն տեսակ ուսարարութեանց և բնաբարութեանց թաւար կ'ըլլան: Բերդակ գիւղն երկու անգամ քիւրտերի կողմէ յարձակում էրեց, առաջին անգամ 8. Մամբրէի (Գոհիբի Տեղապահ) տան վրայ կը յարձակին և ամբողջ աւեր կը կարողանան. երիտասարդներու համբերութիւնը կը հատուի և կ'ուզեն յարձակել քուրտերի վրայ, Ռէս Մատթէոս կ'արգիլէ երիտասարդներին ըսելով թէ՛ աւելի լաւ է որ միայն տուն մը կողոպտուի քան թէ ամբողջ գիւղն աւարի երթայ:

Ռէսի արգելելուն պատճառն էր, գիւղի մէջ 30 հատ գինւորների ներկայութիւնը, որոնք իբր թէ տուրք հաւաքելու եկած, բայց գիւղին մէջ ցրտած կը լրտեսեն եղեր թէ արդեօք քանի՛ երիտասարդներ պիտի կոտին և սրբափհրացան ունին. ահա Ռէս այս բան նշմարելով՝ գիւղին երիտասարդութիւնն պողուցուցած էր:

Երկրորդ յարձակման պատճառն էր խուզարկութիւնը, իբր թէ Անլաջի Սերօք (Աղբիւր) Բերդակ գիւղը կը գտնուի. երբ ոչ որչին գտնեք, կ'սկսին գիւղը կողոպտել ու բնաբարութիւններ կատարել. յետոյ կառավարութեան քննիչներ կուգան ու գիւղին փնտնն 1000 ոսկի կը հաշուեն, ու այս գումարին ի հաշիւ մէկ փուլ չվճարելէ զատ հարկահաւաքներ պարձեալ գալով խառն տուրք կը հաւաքեն:

Առվարիճ գիւղը Պէլէկիցի քիւրդ մ'երթալով Ռէս վահանին հետ կերակուր կ'ուտէ ու միտին զուրս կ'ենեն. յանկարծ հրացանի պայթիւն մը կը լուռի. երբ անեցիկ զուրս կ'ենեն, վահանը գետինը փռած կը զբանեն՝ մեռած: վահանի եղբայրը Սմբատ կը գիմէ Մուշի կառավարութեան և կը բողոքէ մարդասպան քիւրտին գէմ, սակայն կառավարութիւնն ըստ իւր վաղեմի սովորութեան՝ Սմբատն իբրև խուլարար բանտ կը նետէ, ուր բաւական ժամանակ մնալէ յետոյ կաշառք տալով կը սրծի կառավարութեան ձեռքին. երբ գիւղ կը վերադառնայ վահանի սպաննիչը զարձեալ գալով՝ կ'սպաննայ Սմբատին իրեն գէմ բողոքելուն համար: Սմբատ 30 ոսկի տալով հազիւ հազ իւր անձը կ'ազատէ:

Երկրորդ գիւղը Ռէս Միւսի տունը կը լին քերտ մը կ'երթայ և կերակուր ուտելէն յետոյ հրացանը Միւսի կուգի՛ն բռնելով կը

պարպկ և Մխօն տեղն ու տեղը կը մեռնի:

Մխօյի տղան առանց հայրը թաղելու կա-
ռավարութեան գիտելով կը բողոքէ, բայց
գարձեալ իբրև խոտաբար բանտ կը նետեն.
սա ևս 30 օսկի կաշառք տալով կ'ազատի
բանտէն. երբ տուն կը վերադառնայ, հօրը
սպաննիչը գարձեալ գի ղ գալով կ'սպաննայ
Մխօյի որդոյն իրեն վե՛րսողոքելուն համար,
և կը պահանջէ 50 օսկի, Մխօյի ձին ու
զգեստները. որդին պահանջածները տալով
անձը կ'ազատէ:

Ս. Աղբերկայ վանք, որուն խութեցի
քիւրտերը Հայերէն աւելի ջերմեանգօրէն
կը հաւատային ու կը պաշտպանէին, նոյն
խութեցի քիւրտեր, վանք երթալով, վանա-
հայր Ղաղար վարդապետն և ուրիշ երեք
միաբաններ տղաննամ՝ ու վանքին ունեցած
բոլոր եկեղեցական անօթներ, գոյքեր ու
անասուններ աւարի տուած են:

Չենք գիտեր թէ՛ արդեօք քիւրտերի իրենց
ցեղին յատուկ յատկանիշներն ալ փոխուե-
ցան, մինչ ցարզ երբք չ'ը տեսնուած որ
քիւրտ մը սեւ մէկի մը հացն ուտէ ու դառ-
նայ տանտէրն սպաննէ: Եթէ կան դեռ այս
սողերը կարդացողներ ու չի յոգոյներ,
թո՛ղ լսեն թէ՛ ո՞րքան անտանելի կացութեան
մէջ կը գտնուին մեր եղբայրները...:

Առվարիճ գիւղին մէջ կրկին հայ սպան-
նըւած է: Իբր թէ գարձեալ յեղափոխական-
ներ մտած լինին գիւղը, գիւղացիք մտասկայ
գիւղերն ու լեռները փախած են:

Նոյն ամբաստանութեամբ խասգիւղի Տէր
Սերովբէ քահանան ուզած են ձերբակալել,
իբր յեղափոխականների գործակից. յիշեալ
քահանան ստիպուած՝ առանելով իրեն հետ
բաւական երիտասարդներ՝ ելած է լեռն և
ասպատակային կեանք կ'անցունէ:

Բարշէն գիւղի մէջ Սերոբ իւր խմբով կռուի
բռնուած է թորքերի հետ. կ'ըսեն թէ թըշ-
նամոյն կողմէն շատեր սպաննուած են. իսկ
յեղափոխականներն միայն մէկ զոհ սըր,
տէ՛ !

Արատաս համաճէն ասարահայտայ՝ մէյմէկ
երկերիւ անձինք կը մտնեն երկիր և իրենք
էջնահատակ ըլլալէն զատ, հարիւրաւոր սու-
ներու քանդման ու շատ ս'անմեղներու շահ-
ուելուն պատճառ կը դառնան. կրնայ ըլլալ
սր արատաս համաճէն եկողներ Սերոբէն աւելի

քաջ լինին, բայց երկրի զերքերուն և հան-
գամանքներուն բուրբոլին անտեղեակ լինե-
լով փաստակար կ'ըլլան թէ յեղափոխական
գործին և թէ ժողովրդի շահերուն: Սերոբ ևս
թէն շնորհիւ իւր տեղացի և յանգուցն լինե-
լուն շատ մը քաջագործութիւններ կ'ընէ,
բայց գարձեալ ժողովուրդը կը տուժէ, քանի
որ կառավարութիւնը մէկ հարուածի փոխա-
րէն հարիւրապատիկ աւելի վրէ՛ է կը լուծէ
անմեղներէն:

Վերջերս 25ի չափ Մշեցի պանդուխտներ
որ արտասահմանէն վերապարձած կ'ին,
20 օրի չափ իրենց ընտանեաց մէջ մնալէ
յետոյ ձերբակալուեր ու երկրէ դուրս հան-
ուելու համար Տրապիզոնի բանալ տար-
ուեր են:

ՄՈՒՇԵՂ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հոկտ. 9 թուականով գոլտէն քաշուած
հեռագրի մը համեմատ, Պատրիարք Օր-
մանեան վերջապէս Սուլթանին մատուցած
է իր նրաժարագիրը, որուն զլխաւոր շար-
ժաւիթ ցոյց տուած է անխտիր ձերբա-
կալումը հայերու, նոյնիսկ անցագիր ու-
նեցողներուն: Սուլթանը պատասխան ղըր-
կեր է իրեն որ քանի մ'օր ալ համբերէ,
բայց ինք պնդած է, ետ չէ, առեր իր
հրաժարականը: Ծիշը ժամանակն է ուրեմն
բարձրածայն եղանակելու «գոհուլթիւն եւ
փառաբանութիւն»:

— Կ'իմանանք թէ՛ եզիպտոսի առաջնոր-
դական ընտրելէաց ցանկին մէջ մտած են
Տ. Տ. Հմայեակ Գիմաքսեան եւ Վահրամ
Մանկունի եզիպտոսներուն՝ ամուսնները:
Տեղն է ժողովուրդը ներկայացնող Պատկ.
երեսփոխաններուն ուղարկութիւնը հրա-
ւիրելու այս փափուկ խնդրոյն վրայ. որ
յանկարծ սեղանի վրայ կը դրուի, Գաւ.
Վարչութեան վրե՛մ. Ատենապետին վերա-
դարձին հետեւեալ օրը: Հասարակութեան
փափագն է որ Տեարք երեսփոխանք չը
փորձուին շլանալ այդ շողջողուն անուս-
ններէն, մանաւանդ եթէ չ'ենք սխալիք,
Մանկունիի մանուածապատ ու մուլթ ան-
ցեալը՝ չ'նրաշխաւորեր ներկայ կտտ ապա-
գայ ակնկալիքը ժողովուրդին, որ պիտի
յանձնուի անոր հովուութեանը: Գամիրէի
առաջնորդական գահը տեսած է անձնաւո-
րութիւնէլ, որունց յաջորդները ո՛չ Գի-

մաքոսան և ո՛չ Մանկունի կրնամ ըլլալ, նկատելով արդի պայմանները: Գաւառներու կեանքն ապրած, ծանր դէպքեր տեսած անցուցած, նուրբ վարչագէտ ու անկեղծ հօտասէր հովիւ մը կ'ուզեմք, որ զայ միանգամ ընդ միշտ վախճան դնել տիրող անկերպարան կացութեանը, կազմուրէ հիւանդոտ վարչութիւնը, գոհացնէ ժողովրդին կենսական պէտքերը, ու վերջապէս, համադրաբար վերահաստատէ մտքեղուն ու սրտերուն մէջ, որ պղտորած են:

— Շնորհակալութեամբ ստացա՞ք Տիար Մալահի Գուլեանի գրքոյկը — Եւրոպական Բալկանական Պէրլինի դաւանադէմ յետոյ — Արգոյ հեղինակը ամփոփ ու յըստակ սողորու մէջ խտացուցած է ժամանակակից քաղաքական դէպքերն ու անոնց շարժառիթները, իւրաքանչիւր տէրութեան ներքին դիտումները, և դէսլի հայկական խնդիրն անոնց իւրաքանչիւրին վերաբերումը, հետևելով իրենց գերագոյն շահերուն:

Մեր Պատ. ընթերցողներուն ջերմօրէն կը յամծնարարենք սոյն կարևոր գործը, որմէ վստահ ենք թէ պիտի փութան օգտուիլ, միևնոյն ժամանակ քաջալերելով յարգելի և համակրելի հեղինակը:

— Տեղույս Լսալան—Ընթերցատուն ընկերութեան Ընդհանուր ժողովը պիտի գումարուի յառաջիկայ կիրակի 22 հոկտ. երեկոյեան ժամը 2էն վերջը, Ապու-Խալիլի թատրոնին մէջ: Օրակարգի կարևոր խնդիրք է վարչութեան քանի մը հրատարած անդամներու յաջորդներուն ընտրութիւնը: Ընկերութեան յարատեւութիւնն ապահովող միջոցները՝ նոյն օրուան ժողովի նստին լուրջ քննութեան ու խորհրդակցութեան առարկայ պիտի ըլլան:

— Ամսոյս Տին Ապու-Խալիլի թատրոնին մէջ տեղի ունեցաւ վաղամեռիկ Գուրեանի «Սև չողեր»ուն ներկայացումը: Տիարը Ս. և Ե. Պէնլեանք բաւական յաջողութեամբ կատարեցին իրենց դերերը, սին «Նորայր իշխան» և միւսը «Վաչէ մատնիչ», թէև երկուքին ալ հայերէն աշտասանութիւնը չէր այնչափ գոհացուցիչ. բայց Տիկին Մարի Պէնլեան իր դերին մէջ ամուսնական անձնութեան, որովհետև ծնողաւորութեան ու իր սեռին յատուկ խանդավառ հայրենասիրութեան տիպար հանդիսացաւ, իր հայեցի արտասանութեամբն ու բնական շարժումներովը, իսկ Պ. Շաւարշ, կոյր զօրական Վաղինակի դերը կատարեց ամենափայլուն կերպով. նկատելի էին իր շարժումներուն բնականութիւնն ու սրտերը սարսուցեցնող զգայուն

շեշտերը, կոյրի մը գանկին մէջ բռնկած հրդեհիքն — հայրենասիրական վրիժառութեան — արտայայտութեան մէջ ցուցուցած խանդն ու աւելնը: Մտկայն այն իրիկունը, ահնէն աւելի բացակայութիւնը կ'զգացուէր կարող յուշարարի մը — Ինչպէս անցեալ տարի — կամ ուրիշ կերպով ըսենք, դերի խնամեալ պատրաստութեան. երանիթէ վերջին ենթադրութիւնը ճիշդ ըլլալ, որո ինտե երէկուան յուշարարը՝ այսօրուան «Նիշուի»ի հերոսն է դարձեր և ա'լ չ'ուզեր մտնել իր ստորերկրայ բընակարանը: Սողուն էր, թռչուն եղաւ: Նիւթին վրայ տեղը չէ խօսիլ. Էմի որ լուրջ քննադատութեան կը կարօտի: Մասոյց է սակայն որ «Սև չողեր»ը ողբացեալ բանաստեղծին փառքն աւելցնելու հանգամանքէն զուրկ է:

— Ժամանակէ մ'ի վեր Մար-Միմայի Գերեզմանատան մէջ գաղթականաց թէ աղքատաց համար — չենք գիտեր —, փոքրիկ գետին մը յատկացուած է, որուն շուրջը քաշուած է պատ մը: Գիտենք թէ՛ գերեզմանատուն ու եկեղեցի հոմանիշ բառեր են, երկուքն ալ նուիրական սրբալայրեր, ուր խաիր ըսուած սողունը չկրնար սողոսկիլ, գերեզմանատունը մանաւանդ, վերջին օթեանը մարդուն, յարիտեանական քաղաքն է, ուր միայն մահը կը թագաւորէ և ուր աղքատ ու հարուստ միևնոյն հողին ծուցը կը սլառկին հասարակաց օրէնքով. գերեզմանատան մէջ բաժանումներ ընել իւրաքանչիւր ընտանեաց դամբարաններ յատկացնել, աստիճան մը կրնանք ընդունիլ, սակայն, երբէք չենք ներքեր որ մեր վարիչները կոչուող ապիկարները՝ մեր կրօնային հմաւանդ ու սրբազան սովորութիւնները — որոնք օրէնքի կարգ են անցեր — կոխտելու և ջնջելու աստիճան առաջ տանին իրենց անխոհեմութիւնը, կամ աւելի ճիշդը, տգիտութիւնը: Ո՞ր օրէնքով կը վաճառուի գետին մը, որ ծրի շնորհուած է իբրև գերեզմանատուն ծառայելու համար եկեղեցւոյ զաւակներուն: Լա՛ւ, գետինը թո՛ղ ծախեն, եթէ գողներ կան. բայց ո՞ր տրամաբանութեամբ պատ կը քաշուի. միթէ գալթականներն ինքնասպաններ են...:

Կը պարտաւորինք ընել այս դիտողութիւնները, նկատելով որ հասարակութիւնն արդար զայրոյթով լեցուած է այդ այլաբանակ պատին գոյութեանը դէմ. պատ մը, զոր կը լսենք թէ մօտերս իր ձեռքովը պիտի Էանդէ, հա՛նարելով զայն իբրև արծան մախտանաց, հայ գաղթականութեան կարեւոր սրտին վրայ ցցուած: Ազգ. վար-

չութեան լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք առ այս:

—Արաբկիրի պատուաւոր ազգայիններէն Գէորգէֆ-Եկաւեան որ ընդհանուր կոտորածէն ի վեր խորքերով կեդր. բանտը մետուած էր, քաղաքն գտնուող իր ընտանեաց կը հեռագրէ թէ՛ ընդհ. մերումով արծակուած է: Մեր խնդրանքով: ընկ. լէ վերջ՝ կը մաղթենք որ այդ մերումէն բոլոր հայ բանտարկուածներն օգտուած ըլլան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԻՍԱՍՍԵՆԱԿ

Քաղաքական աշխարհի ուշադրութիւնը դարձած է երկու անձնաւորութեանց՝ Քրիկէրի և Չէմպրլէյնի՝ և անոնց ներկայացուցած կառավարութեանց վրայ: Մին՝ Քրիկէր՝ նահապետի մը վարքն ունի իր երկիւզած շարժումներով և խաղաղասէր ոգով. միւր՝ Չէմպրլէյն՝ Ս. Գրոց Գողիաթը կը յիշեցնէ իր յոխորտանքներով և սպառնալիքներով: Առաջինը կ'ուզէ իր փոքրաթիւ ժողովուրդին պետը մնալ և զանոնք կառավարել ըստ իրենց ընդունած օրինաց. երկրորդը կը պահանջէ իր կառավարութեան հպատակեցնել անոնց ամենը: Քրիկէր ազատախօս է և անկեղծ. Չէմպրլէյնն անհոգամիտ և երկասյրաբան: Նահապետը պարաստ է անձնաշահութեան, և Գողիաթ՝ դահճութեան: Թրանսփասլի նախագահը քաղաքականութեան նըրբութեանց ոչ շատ տեղեակ կէսվայրենի մը նկատուած է, իսկ բրիտանական վիթխարիութեան գաղթականութեանց նախարարը՝ դիւանադիտութեան մէջ հանած վարած մ'է և որդի՝ երկրիս, գէթ ըստ երեւոյթի, ամենակիրթ ազգի մը: Պօէրք և Անգղիայիք եթէ ոչ ցեղակից, կրօնակից են, բողոքական:

Անգղիան տեսնելով թէ՛ բաւական ասկէհանքեր կան թրանսփասլի փոք-

րիկ հանրապետութեան հողին տակ, այս անգամ ալ՝ ինչպէս գրեթէ միշտ՝ մուցաւ իր ընդունած նշանաբանը, որ է Աստուած եւ իմ իրաւունիս (Dieu et mon droit) և յենլով իր պակուցիչ կարծուած զօրութեան վրայ՝ իր լուծը ներկայացուց Պօէրքերուն, որոնք անզուսպ լեռնականք՝ ինչպէս մեր Չէյթունցիք՝ արհամարհանօք մերժեցին զայն և ՚ի վէն գիմեցին իրենց աստուածատուր ազատութիւնն ու անկախութիւնը պաշտպանելու համար:

Իբր պակեր դարավերջիկ քրիտանէական քաղաքականութեան, ՚ի նկատի առնելու է որ Անգղիան՝ մինչդեռ մէկ կողմէն Լահէյի Համաժողովին մէջ մշտապէս խաղաղութեան մը ծրագիրը պատրաստելու կ'աշխատակցէր, միւս կողմէն ատմաւոր գնտակներուն զործածութեան գէմեղած բողոքները կ'արհաւիրէր, իր մարդատեսաց վարձանքն այսպանող երեսփոխան մը կը յանդիմանէր և ձեռքի տակէ՛ ՚ի թրանսփասլ լէնկթիմուրային շարժանք մը կը կազմակերպէր: Ինչ հեղուկին:

Ախ, եթէ մեր յեղափոխական ինքնակոչ պետերը փոխանակ խիտ գիւրահաւան և կենաց ու պատուոյ ապահովութեան տենչով կիզող ժողովուրդը յումայէտս զրգռելու, իրենց նախնական և նուիրական պարտք ըրած ըլլային մի քիչ ուսումնասիրել ընդհանրապէս բոլոր տէրութեանց քաղաքականութիւնը, և մասնաւորապէս Անգղիոյ վաճառականական և զուտ եւասիրական շահադիտութիւնն ու խորագիտութիւնը, և մասնաւորապէս անոնքնայատկութիւնը զոր ունի չուրը պղտորելու, որպէս յի յատակը չ'երևայ, այն ատեն ազգը՝ ուրիշ և եթէ ոչ արդիւնաբեր՝ գէթ նուազ կործանարար ուղղութիւն մը պիտի հետեւէր... Բայց ինչ օգուտ ողբալ

անցելոյն վրայ. սուգն ու արտասուք
չեն որ մեր նահատակներուն յարու-
թիւն, մեր որբերուն և այրիներուն
մխիթարութիւն, մեր սովեալներուն
անունդ ու մեր սերնդին առողջ դաս-
տիարակութիւն պիտի տան: Անցեալը
յիշելու է միմիայն անկէ օգտուելու
համար:

Վերագառնալով թրանսպարանի խն-
դոյն՝ կարծեմ՝ դիտողներու համար
նորութիւն մը չ'պիտի ըլլայ եթէ ը-
սեմ թէ այդ փորձիկ այլ քաջարի
ժողովուրդը անդղիական վիթխարի
պետութեան պատերազմական ուժին
փորձաքարը եղած է, և թերևս սահ-
մանուած է փութացնելու այդ տիե-
զերածառալ անյագ կայսրութեան
զլխիվայր թաւալզլորիլը, որ արդէն
սկսած է յորմէհատէ ազամանդիկ
յորելեանին առթիւ, նա ուզեց իր
մարտանուերուն ցուցահանդէսովը՝
տէրութիւնները շլացնել և ահաբեկել:

Քրիտանական տէրութիւնը հաւա-
ր բազմանքին, կառավարութիւնները
սարսափեցան և միանդամայն ուշա-
բերեցան ՚ի տես այդ ահաղին նաւա-
տորմիլին: Եւ այդ սոսկումին հետե-
ւութիւնն այն եղաւ որ անհաշա թըշ-
նամի կարծուողները իրարու մտե-
ցան և իրենց ծովային զօրութիւնը
ջանացին բազմապատկել առանց ժա-
մանակ կորսնցնելու: Արդ՝ Անգլիոյ
սկարացումը կը կայանայ իր թշնա-
միներուն զօրացման մէջ, որուն ան-
խուսափելի արդիւնքը պիտի ըլլայ
պարտութիւն, որ անկման համազօր
է այնպիսի լայնատարած տէրութեան
մը համար:

Ուստի առանց յուսակնութեան կըր-
նանք ըսել թէ Անգլիոյ յիշեալ նա-
ւախմբային ցոյցը սխալ մ'եղաւ և
աղիտարեր իրեն համար,

Երկրորդ սխալ մ'եղաւ Ֆաշոտալի
խնդիրը, որ Քրիտանիոյ գաղտնի զի-

տումները պարզեց յաչս աշխարհի,
և ստիպեց Ֆրանսան ամբացնել իր
ծովեզերքը:

Միւս տէրութիւնները ինքնապաշտ-
պանութեան և թերևս մշտաւոր ա-
պագայի մը մէջ իրեն դէմ յարձա-
կողական միջոցներ ձեռք առնելու
ստիպելէն ետքը բրիտանական զօռոզ
կայսրութեան կը մնար իր զինուո-
րական զօրութեան չափը ցոյց տալ:
այս բանիս ալ առիթ եղաւ թրանս-
պարանի խնդիրը:

Երկու ամիս շոգեհասուներու երթե-
ւեկութեան, զօրքի փոխադրութեան
արդիւնքն այն եղաւ որ այսօր (չոկտ.
12) Անգլիան ունի թրանսպարանի
սահմանակից Նաթալի մէջ միայն
22000 մարտիկ ամեն կարգէ և
զեռ պատերազմը չ'սկսած՝ պահե-
սի զօրքերը կը ժողվէ և հան-
րակաւքերու և թրամուէյներու ձի-
երուն վրայ ձեռք կը դնէ: Այս
իրողութիւնը մտածել կուտայ որ
եթէ փոխանակ պօքրներու պէս սա-
կաւաթիւ (հազիւ 40,000) խաղաղա-
սէր և վերջապէս ո՛չ ամենակատա-
րեալ կերպով կողմակերպեալ հա-
կառակորդներու զիմացն ունենար նա-
խայարձակ ըլլալու կարող մի եւրո-
պական տէրութիւն, ինչ պիտի ընէր:

Սակայն բրիտանական կառավա-
րութիւնը յամառ է, սկսածը կ'աւար-
տէ և բռնածը զիւրաւ չ'ձգեր, մո-
նաւանդ եթէ խնդիրը սակահանքերու
վրայ է, ուստի մարդկային տեսա-
կէտով անվիճելի է որ վերջնական
յաղթութիւնը Անգլիոյ պիտի մնայ:
Բայց սա կէտն ալ անվիճելի է որ
անդղիական զօրաց առաջին պարտու-
թեան հետևանքը կայսրութեան շատ
մը մասերու մէջ ապստամբութիւններ
յարուցանել պիտի ըլլայ: Ահա այն
ատեն գործը պիտի դժուարանայ: Հոս
չենք խօսիլ այն անակնկալներու վրայ

զոր ուրիշ տէրութիւնք յանկարծ կը ներկայացնեն պատերազմով զբաղեալ և խոնջեալ տէրութեան մը, 'ի կարգադրութիւն խելքէ մտքէ չ'անցած հին և նոր հաշիւներու. ճիշդ ինչպէս վաճառականները կ'ընեն գործը գէշ գացող վաճառականի մը:

Եթէ կայսրութեան աննպատառ այս հաւանականութեանց յաւելունք նաև թէ՛ Անգղիան մտաւորապէս կէս դարէ ի վեր պատերազմ՝ ըսուելու սրժանի պատերազմ՝ ունեցած չէ (ի բաց առեալ ափ մը Աֆրիտիներու ապրտամբութիւնը և մեծ մասամբ փայտով ու նիզակով միայն զինուած Սուտանցաց յիմարական և մարեան-գային ընդդիմութիւնը, ընդդիմութիւն՝ որուն մասնաւորապէս ենթարկուողները եզրագտական բնիկ զօրքերն են եղած) և հետևաբար գործնականապէս ուղղմազէտ զօրապետներ չեն վխտար իր բանակին մէջ, մինչդեռ Պօէքք լաւ զինուած իրենց ազատութիւնը պահելու ոգով վառուած և մահն աչք սուած անվեհեր ախոյեաններ են, պիտի տեսնենք որ անգղիական կառավարութիւնը չպիտի կրնայ անվրդով բուն մը վայելել:

Ի մի բան, քաղաքականապէս բուրովին նախանձեղի կացութեան մէջ չ'գտնուիր բրիտանական ասեղ կայսրութիւնը. իսկ բարոյական և մարդասիրական տեսակէտով նա կ'արգարացնէ թրքաց խժգժութիւնը և վայրենիներու իրերակերութիւնը:

Ինչպէս ըսինք՝ Պապա Քրիսկէր բողոքական մ'է, բայց բրիտանական բողոքականներէն. խղճամիտ և արգարասէր կ'երևայ, և թերևս այն հաւատքն ունի որ արգարութիւնը վերջն ի վերջոյ իրեն զօրավիգ պիտի ըլլայ և իրեն առիթ պիտի տայ երգելու Մովսէսի հետ.

«Չարմանք մի մեծ այս են. զիս՝ որ մին զհազարս հալածեսցէ, կամ երկուք զբիւրս շարժեսցեն. թէ ոչ Տեառն Աստուծոյ մասնեալ էր զնոսա, և

առեալ զնոսա ձեռութ շնամեացնոցա: Ձի ոչ են զիք նոցա որպէս զԱստուած մեր, այլ թշնամիք մեր վատախորհուրդք»:

Արժանի պատիժ ամբարտաւանութեան: Արգարե երկրիս պատմութեան ո՛չ անցեալը և ո՛չ ապագան կրնան երաշխաւորել թէ՛ ծովերու այդ վիշտապաճուկը մ՛տա օր մը դաշտերու և անապատներու մէջ չ'իռուի թե՛ վակորոյս:

Ինչ որ ալ ըլլայ, առ այժմ՝ փոքրիկ թրանսպալի արեասիրտ որդիքը խիստ վտանգալի վիճակի մը մէջ կը գտնուին. ուստի բնականաբար դէպ ի բռնաբարեալները կ'ուղղուին ասպետական և հարստահարեալ աչգաց համակրածքն ու մաղթանքը:

Արգարութիւնն ալ այս կը պահանջէ:

12 Հոկտ. 99

Պ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ “ԱՄՍԼՍԱՐԱՆ,,Ի

Խմբագիր Տէր

«Համալսարան» գրական և զիտական ամսաթերթը, որ պիտի հրատարակուէր մեր խմբագրութեան տակ և ծախքերով, այս ամսոյ սկիզբը, մեզմէ անկախ պատճառներով մէկ ամիսի չափ ուշ լոյս պիտի տեսնէ: — Աւստրիոյ և Պուլկարիոյ միջև ճանապարհներու փճանալովը՝ երկաթուղիներու երթևեկութիւնը զժուարացած լինելով, մեր թերթին տպագրական տառերը՝ մեր կարծած ժամանակէն գրեթէ մէկ ու կէս ամիս յետոյ մեզ պիտի ժամանեն: —

Կը խնդրենք հրապարակել հաճիր այս երկտողը հայ հասարակութեան և մեզ արգէն բաժանորդ գրուիլ փութացողներու ո՛նէ կասկածանքի տեղի չը տալու համար:

Մեր նոր հասցէն է.

REDACTION "AMALSARAM,
3, Place Monge, 3, PARIS

Խմբագիրներ

ՅՈՎ. ԵԱՆՍԵ: Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Le Gérant, J. MUNIER

ՎԻՄԱ-ՏՊԱՐԱՆ ԵՒ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԳՈՒՆԱԻՈՐ ՏՈՒՓԵՐՈՒ

Յ, ԵՎՅԲԿԵԱՆՔ

ԳԱՀԻՐԷ ԺԱՐՏԷՆ ԻՐՍՍԷԹԵԻ ԽՈՒՆԱԿԱՆ ԲԱՐԵՂՈՐԾ. ըՅԿ. ՂԷՏՂ

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՔ ԵԳԻՄՏՈՍԻ ԿԱՐԵՒՈՐ ԲՈՂՈՐ ՔԱՆԱՔՆԵՐՈՒ ՄԷՋ ՓՈՐՈՒՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄԻ շԱՍԱՐ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԸՆՏԻՐ ԳԱՂՂԻԱԿԱՆ ԳԼԱՆԻԿԻ ԹՈՒՂԹԻ
ԵՒ ԲԱԶՄԱԳՈՅՆ ՏՈՒՓԵՐՈՒ ԵՐՈՊԱԿԱՆԻՆ ՅԱՐ ԵՒ ՆՄԱՆ

ՆԵՏԱՈՆԵ աւելի վերջին կատարելագործեալ Տիպար-մեքենաներով կը վիճակագրուին
ամեն տեսակ գունաւոր գործեր, կը սպուին ամեն լեզուէ գրէր. պրօճիւրներ,
լազիւրներ, բրօքէֆրիւս, մեմօրանսօմ, նամակագրուիս, պահարան եւ շքաբերալ սններ
դիւրամասշտիլի գներով եւ խիստ մօտաւ:

ՏՕՐԹ. Ն. Պ. ՔԷԶԵՃԵԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԳԻՐՔ ՈՒՋՈՂՆԵՐՈՒՆ

Տօրթ. Քէչէճեան պատիւ ունի ծա-
նուցանել թէ իւր պաշտօնատեղին
փոխադրած է Քեամիլ փողոց թիւ 3,
Հօթէլ Շէֆրերի ղէմը:

Հիւանդներ կ'ընդունուին ամեն օր
առաւօտեան ժամը 10—12 եւ կէսօրէ
վերջ 3—5 (ը. ե.):

Ազրատ հիւանդներ ձրի կը գարձանուին:

Գոշիրէի եւ շրջակայից գրասեր հայ հա-
տարակա թեան զիւրաթիւն մը տալու մտօր՝
կը ծանուցար թէ Հայերէն ամեն գիրք,
(Պատական, Գորոցական, Գիտական, Գրա-
կան, Արուեստական, Բանասիրական, Վի-
պական եւլն.) որ հրատարակուած են եւ կը
հրատարակուին Պօլիս, Իշթիք, Երուսաղէմ,
Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է
զիւրամասշտիլ պայմաններով ձեռք բերել՝
զիմեղով Տիպար Կ. Նաւասարգեանի կամ Ի
Կեղք. կրթարան:

ԿԵՐՈՆԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՆԹԱՐԱՆ ԳԱՀԻՐԷՐ

Շ ա. Կ Մօճ ա. Կես Այլն փիլիսոփայ խմբագրատունը

ՀԻՄՆԱԳԻՐ-ՏԵՕՐԷՆ

ՍՄԲԱՏ ԲԵԲԲԱՏ

Կաւանդուին հայերէն, անգլիերէն, ֆրանսերէն եւ արաբերէն լեզուները, նա-
խակերպական եւ երկրորդական ուսմանց ու զիտուրեանց հետ, խնամեալ ազգային
պոստիարակութեան մը հիման վրայ:





